Այդ արձանագրութեան կեղծ լինելու մասին մենք տակաւին ասելիքներ չատ կ'ունենանք։ Այստեղ միայն ասենք, որ «Ստեփանոս Սալմաստեցու մահուան» արձանագրութիւնը կամ տապանագիրը հովուերգական կեանք է ունեցել, ժամանակի ընթացքում դիմափոխութիւնների է ենթարկուել։ Հնագոյն օրինակը, ինչպէս տեսանք, 1655 թուականին Ս. Ստեփանոսի հրատարակածն էր. 1728 թուականին Կ. Նիեսիեցկու հրատարակածը՝ դրա բարեփոխուած մի տարբերակն էր։ Հետագայում, մի ժամանակ, այդ տապանագրի քարը անյայտացել էր, չգիտես՝ ե՞րբ, ինչո՞ւ եւ ինչպէ՞ս, և տեղի էր տուել ենթադրութիւնների, թէ մօտաւորապէս ի՞նչ ձեւով կարող էր եղած լինել նրա բնագիրը[45]։ Աւելի ուշ ժամանակներում, — թէ ե՞րբ՝ այդ եւս յայտնի չէ, — նոր տապանագիր է փորագրուել՝ բառացիօրէն Նիեսիեցկու տուած բնագրի հիման վրայ, միայն մի տարբերութեամբ, որ «1551» թուականից առաջ աւելացուել է երկու սկզբնատառ՝ A. D. (այսինքն՝ «յամի Տեառն»)։



HOC SEPULCHRUM EST REVERENDISSIMI
PATRIS STEPHANI PATRIARCHAE MAJO
RIS ARMENIAE QUI ROMAE FUIT ET LEO
POLIM ADVENIENS ANIMAM SUAM DEO TRA
DIDIT A. D. 1551

Այս է, որ գոյութիւն ունի մինչեւ այսօր, զուգորդուած՝ մի անանուն լատինատիպ քանդակի հետ, որին աւանդաբար, — եւ նոյնպէս յայտնի չէ, թէ ո՞ր ժամանակուանից, — «Ստեփանոս կաթողիկոս Սալմաստեցի» անունն են տուել ու տալիս։ Արձանագրութեան քարն ու այդ քանդակը չեն գտնուում որեւէ գերեզմանի վրայ, այլ երկուսը միասին տաճարում ուղղահայեաց դիրքով կանգնեցուած են պատին ու ամրացուած նրա մէջ. տակը՝ արձանագրութեան քարն է, իսկ վրան՝ քանդակը, այնպէս որ առաջինը կարծես պատուանդան է ծառայում երկրորդին, բայց ուշադիր աչքը կարող է նկատել, որ լայնութեան փոքր չափեր ունեցող՝ արձանագրութեան քարը չի կարող պատուանդանը լինել լայնութեան աւելի մեծ չափեր ունեցող մի քանդակի։ Այսու ամենայնիւ որեւէ մէկը մինչեւ այսօր հաշուի չի առել, որ դրանք իրար հետ կապ չունեցող երկու տարբեր յուշարձաններ են, որոնք, միասնական համարուելով, առեղծուած են դարձել Լեհաստանի հայ գաղութի պատմութեան մասնագէտների համար։ Այդ առեղծուածի մէջ թափանցելու համար՝ պէտք է առանձին վերցնել արձանագրութիւնը, աւելի ճիշտը՝ այդ արձանագրութեան նախնական՝ ստարովոլսկեան տարբերակը, որը, իր 1551 թուականով եւ Յուլիոս Երկրորդ պապի անուան յիշատակութեամբ, յայտնի հակասութիւն է ներկայացնում, հակասութիւն, որը չարչարել է Պետրովիչի միտքը. բայց մեզ համար ամենակարեւորն այդ «հակասութիւնն» է։

Առեղծուածի լուծման բանալին պէտք է որոնենք Յուլիոս Բ-ի հետքերով։ Յուլիոս Բ պապը գահակալել է 1503–1513 թթ., իսկ Ստեփանոս Սալմաստեցին այս

45 S. Baracz, «Rys dziejo'w ormian'skich», Tarnopol, 1869, s. 112, nota 116. Հմմտ. ՊՍՍ էջ 52։ Անհետացման մասին մեզ յայտնի են փաստեր նաեւ այլ աղբիւրներից։